27 սեպտեմբեր. 2024թ.

№_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի

27 սեպտեմբերի, 2024թ.

Ս/թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում տեղի ունեցավ «ԳՈՍ» ՓԲԸ-ի կողմից նախաձեռնված ՀՀ Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի տարածքում գործող ձկնաբուծական տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում (1-ին փուլ):

Մասնակցեցին՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Դավիդ Քեֆոյանը, «ԳՈՍ» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Սողոմոնյանը և ներկայացուցիչներ՝ Ռուբեն Վարդանյանը և Արտյոմ Ղևոնդյանը, Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Սիրական Սիրականյանը և համայնքի բնակիչները:

Մասնակիցների ցանկը կցվում է:

Զեկուցումներ՝

Սիրական Սիրականյանը հանդես եկավ բացման խոսքով և խոսքը փոխանցեց «ԳՈՍ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ռուբեն Վարդանյանին:

Ռ. Վարդանյանը ներկայացրեց հանրային լսման նպատակը՝ կապված («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և օրենքում կատարված փոփոխությունների վերաբերյալ, խոսեց «ԳՈՍ» ՓԲԸ-ի գործունեության մասին և մանրամասն ներկայացրեց հանրային լսման ընթացակարգերը:

Բնապահպանական միջոցառումների վերաբերյալ Ռ. Վարդանյանը նշեց, որ գործունեությունը իրենից չի ենթադրում օդի աղտոտվածություն,աղմուկ, հաղաբուսական շերտի վնասում:

Հավելեց նաև, որ ընկերությունը դիտարկում է հետագայում արտադրական ծավալների որոշակի ավելացում, քանի որ բոլոր պայմանները առկա են՝ արտադրական տարածքում առկա են լճակներ, նաև ջրօգտագործման թույլտվություն ունի մոտ 500լ/վ-ով սակայն այս պահին ոգտագործում է մոտ 170 լ/վ-ով այսինքն ընկերությունը բոլոր պոտենցիալն ունի արտադրությունը մեծացնելու, զարգացնելու նաև ներդնելու արդի տեխնոլոգիաներ, ընկերությունը նախատեսում է նաև ունենալ արևային կայաններ, որը նաև կանաչ էներգիայի աղբյուր է:

Դ. Քեֆոյանը հարց բարձրացրեց «ԳՈՍ» ՓԲԸ-ի կողմից համայնքի սոցիալական պարտավորությունների ավելացման հետ կապված և հավելեց, որ ողջունելի է ընկերության գործունեությունը աշխատատեղերի բացման հետ կապված:

«ԳՈՍ» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Սողոմոնյանը պարզաբանեց, որ ընկերությունը իր հերթին միշտ էլ պատրաստ է օգնելու և իր մասով միշտ էլ կատարում է նաև գետի մաքրման աշխատանքներ:

Ռ. Վարդանյանը եզրափակիչ ելույթով ամփոփեց լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներից մասնակցության համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ — Դ. Քեֆոյան

Լիճք բնակավայրի ղեկավար — Ս. Սիրականյան

«ԳՈՍ» ՓԲԸ-ի տնօրեն — Կ.Սողոմոնյան